ՈՒՂԵՐՁ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՔՎՈՐՈՒՄԻ ԱՆԴԱՄԻ ԿՈՂՄԻՑ

Ուրախության և երջանկության ավետարանը

Երեց Բրյուս Դ. Փորթեր

Արևելյան Եվրոպայի տարածքի նախագահ

Ես խորապես երախտապարտ եմ Առաջին Նախագահության կողմից որպես Արևելյան Եվրոպայի տարածքի նախագահ կանչվելու համար: Ես մեծ սեր եմ տածում այս տարածքի երկրների և մարդկանց հանդեպ, և իմ մասնագիտական կյանքի ընթացքում շատ ժամանակ եմ անցկացրել, ուսումնասիրելով աշխարհի այս մասի պատմությունը, մշակույթը և միջազգային հարաբերությունները, նաև 1995–1997թթ. ծառայել եմ որպես խորհրդական նույն տարածքի նախագահությունում: Ես ճանապարհորդել եմ Ռուսաստանի, Ուկրաինայի, Հայաստանի, Բուլղարիայի, Թուրքիայի և Բալթյան երկրների տարածքներով: Այդ ժամանակ մեր գրասենյակը գտնվում էր Ֆրանկֆուրտում, Գերմանիա: Այժմ ես հաճույքով ապրում եմ իմ կնոջ՝ Սյուզանի հետ հենց այս տարածքում, այս լավ մարդկանց մեջ:

Երեց Բրյուս Դ. Փորթեր

Այս հանձնարարականը ստանձնելիս իմ պարզ ուղերձը հետևյալն է. Հիսուս Քրիստոսի ավետարանը ուրախության և խաղաղության ավետարան է: Այն մեղավորության ավետարան չէ, քանզի Քրիստոսն եկավ վերցնելու մեր մեղավորությունը: Այն ծրագրերի, վիճակագրության, հաշվետվությունների և ցանկացած այլ գործունեության ավետարան չէ, այլ պարզության, մաքրության և սիրո ավետարան է: Թեև մենք ունենք ծրագրեր և հաշվետվություններ, և նյութական աշխատանք, որը պետք է կատարենք Եկեղեցում, դրանք որպես Վերջին Օրերի Սրբեր մեր կյանքի միայն մի փոքր մասն են կազմում: Փոխարենը, Աստծո և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի լույսը պետք է ամենից պայծառ շողա մեր սրտերում և մտքերում:

Հիսուսն ասաց այս խոսքերը աշխարհի փրկագնման իր առաքելության վերաբերյալ. «Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ: Ձեզ վերայ առեք իմ լուծը և ինձանից սովորեցեք. Որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ: Եվ ձեր անձերի համար հանգստություն կգտնեք. Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը թեթև» (Մատթեոս 11.28–30):

Մենք գալիս ենք դեպի Քրիստոսը՝ մեր կյանքի ընթացքում միշտ հիշելով Նրան, լինելով Նրա վկան մեր խոսքերով և գործերով, և միշտ աղոթելով Հորը Նրա անունով: Նրա բազմաթիվ անուններից կամ տիտղոսներից մեկն է՝ «Էմանուել» կամ «Աստված մեզ հետ»: Եթե մենք նայենք Նրան հավատքով և խոնարհությամբ, Նա մեզ հանգստություն և խաղաղություն կտա: Նա կլցնի մեր սրտերը ուրախությամբ: Նա մեզ ուժ կտա հաղթահարելու աշխարհը և ապաշխարելու ու ներվելու մեր մեղքերի համար:

Երբ Աստծո և Քրիստոսի մասին մեր գիտելիքն աճում է, երկնքի պատուհանները բացվում են և մենք ստանում ենք հոգևոր պարգևներ, այդ թվում՝ մեր աղոթքների պատասխանները, ուղղություն կյանքի կարևոր որոշումներում, սեր և գթասրտություն բոլոր մարդկանց հանդեպ և բուժման ու մաքրագործման հրաշագործ պարգևները: Նա կլինի մեր աջ կողմում և ձախ կողմում, և Նրա Հոգին կլինի մեր սրտերում, և Նրա հրեշտակները՝ մեր շուրջը, որ բարձրացնեն մեզ (ՎԿՈ 84.88):

Թող որ մենք միշտ ձգտենք ունենալ և փնտրենք Աստծո բարձրագույն պարգևները: Թող որ մենք միշտ աղոթենք Նրան և ճանաչենք Նրա Սիրելի Որդուն՝ մեր Քավիչին: Թող որ մենք միշտ հետևենք Քրիստոսի օրինակին մեր բոլոր գործերում և միշտ հիշենք Նրան: Ես վկայություն եմ բերում այն մասին, որ Նա ապրում է և սիրում է մեզ կատարյալ սիրով, որը վերջ չունի: Թող Նրա խաղաղությունը, հանգստությունը և ուրախությունը ընդմիշտ լինեն ձեր սրտերում: ■

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի այցը Արևելյան Եվրոպայի երկրներ

Յուրի Կովալեվսկի, Մերձբալթյան միսիա

2014թ. մայիսին Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ՝ Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը տիկնոջ հետ միասին այցելեց Արևելյան Եվրոպայի տարածքի մի քանի երկրներ: Նրանց ուղեկցում էին Յոթանասունի անդամ՝ Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդը՝ տիկնոջ հետ, Նախագահող Եպիսկոպոսության առաջին խորհրդական՝ Երեց Ժերալդ Կոսեն՝ տիկնոջ հետ, Արևելյան Եվրոպայի տարածքի նախագահության անդամները և Յոթանասունի տարածքային Քվորումի անդամ՝ Երեց Ալեկսեյ Սամայկինը: Այցի շրջանակներում տեղի ունեցան հանդիպումներ Եկեղեցու անդամների հետ տարածքի տարբեր երկրներում և քաղաքներում:

2014թ. մայիսի 31-ին Լատվիայի Ռիգա քաղաքում տեղի ունեցավ քահանայություն կրողների ուսուցում Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ՝ Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի նախագահությամբ: Այն միաժամանակ հեռարձակվում էր արբանյակային կապով և համացանցով Արևելյան Եվրոպայի տարածքի բոլոր երկրների հավաքատներ և համաժամանակյա թարգմանվում էր ինը լեզուներով:

Քահանայություն կրողների տարածքային համաժողովն առաջին անգամ էր հեռարձակվում նման ծավալով՝ ինչպես կամավոր օգնականների մասնակցությամբ, այնպես էլ՝ տեղեկատվական և հաղորդակցման համակարգերի և Հրատարակման բաժնի ծառայությունների մասնագիտական ռեսուրսների ներգրավմամբ: Դա ընդգծում է ոչ միայն Եկեղեցու տարածքային բաժանմունքների հնարավորությունների աճը, այլ նաև քահանայություն կրողների կողմից հատկացվող ավելի մեծ ուշադրությունը տարածքում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ: Նոր բարձունքի է հասել կարևորագույն միջոցառումների տեխնիկական ապահովումը, և այդ հաջողությունը,

Երեց Բեդնարը խոսում է Մոսկվայի ցցի համաժողովում.

անկասկած, կամրապնդվի մոտ ապագայում:

Ուսուցման ընթացքում շեշտվեց, որ ծառայության մեջ եղբայրները պետք է առավելագույն ուշադրություն հատկացնեն առանձին անդամներին և ընտանիքներին, ոչ թե տարբեր ծրագրերին, պատկերավոր ասած՝ թանկագին մարգարիտին, ոչ թե զարդատուփին, որում այն պահվում է: Ելույթ ունեցող Եկեղեցու ղեկավարները ընդգծեցին, որ այսօր Տերն Ինքն է արագացնում Իր աշխատանքը, և Աստծո ծառաների առաջ խնդիր է ծառացել հետ չմնալու այդ աշխատանքում, այլ ոտք-ոտքի քայլելու Տիրոջ հետ՝ նոր խրատներ ստանալով հայտնության միջոցով: ■

Զարգացնենք մեր հավատքն ու երախտագիտությունը

Հասվիրա Մինասարյան, Երևան ձյուղ, Երևան-Հայաստան ցի

2014 թվականի մայիսի 29-ին Արաբկիր ծխի ժողովատանը Քույր Բեդնարը և Քույր Լորենսը հանդիպում ունեցան ցցի 15 երիտասարդ ամուրի քույրերի հետ: Հանդիպումը շատ բավանդակալից էր և ուսանելի: Քույր Բեդնարը և Քույր Լորենսը՝ քույրերի հետ շրջան նստած, քննարկեցին Նախագահ Ուխդորֆի 2014թ. ապրիլյան համաժողովի ելույթը «Մի՞թե մենք պատճառ չունենք երախտագիտությամբ լցված լինելու՝ անկախ հանգամանքներից»:

Աղջիկները հիանալի մտքեր հայտնեցին իրենց փորձառություններից և փորձություններից: Ինչպես Երեց Ուխդորֆն է նշել. «Ոմանք, հնարավոր է, ասեն. «Ինչի՞համար պետք է երախտապարտ լինել…. Դժվար է երախտագիտության ոգի զարգացնել, եթե մեր երախտագիտությունը միայն համարժեք է մեր հաշված օրհնությունների թվին: Ճիշտ է, կարևոր է հաճախակի «մեր օրհնությունները հաշվելը», և ամեն ոք, ով փորձել է, գիտի, որ դրանք շատ են, բայց… Տերը չի ակնկալում, որ առատության և հեշտ օրերին մենք ավելի շատ երախտապարտ լինենք, քան փորձությունների ժամանակ: Իրականում, սուրբ գրությունների հղումներից շատերը խոսում են ոչ թե ինչ-որ բանի համար երախտապարտ լինելու մասին, այլ առաջարկում են, որ մենք մշտապես երախտագիտության ոգի ունենանք»:

Քույր Բեդնարը հարց տվեց աղջիկներին, թե ինչու է Աստված ուզում, որ մենք երախտագիտության ոգի ունենանք: Միթե՞ Նա կարիք ունի, որ մենք շնորհակալություն հայտնենք ամեն անգամ, դա նրա՞ն է պետք, թե մեզ: Քննարկումը հանգեցրեց այն մտքին, որ դա մեզ է պետք. որպեսզի մենք ուժեղ լինենք, որպեսզի մենք դաստիարակվենք և կրթվենք և որպեսզի երջանիկ լինենք, որովհետև, երբ երախտագիտության հոգի ենք ունենում,

երջանիկ ենք լինում, իսկ Աստված ուզում է, որ մենք ուրախ լինենք: Մենք պետք է երբեմն հղենք միայն երախտագիտության աղոթքներ և ոչինչ չխնդրենք:

Քննարկման ընթացքում աղջիկներին միացավ Երեց Բեդնարը: Նա իր լուսավոր ժպիտով և իր տիկնոջ հանդեպ ջերմ և քնքուշ վերաբերմունքով լսարանը լցրեց ուրախության զգացումով: Նա հնարավորություն տվեց, որ աղջիկները հարցեր տան: Աղջիկներից մեկը հարցրեց, թե ինչպես կարող է ամրապնդել իր հավատքը: Երեց Բեդնարը հրաշալի պատասխան տվեց՝ ոգեշնչելով բոլորին: Նա առաջարկեց պատկերացնել խավարով պատած մի սենյակ, որտեղ խարխափում եք, չիմանալով, թե որ կողմ գնաք: Հանկարծ մի լույս է ընկնում այն տեղի վրա, որտեղ դուք կանգնած եք և մի ձայն հորդորում է քայլ անել: Առջևում խավար է և դուք վախենում եք քայլ անել, մտածելով, որ կարող է առջևում փոս լինի և դուք ընկնեք: Բայց, երբ որոշում եք լսել ձայնին և կատարել քայլը, տեսնում եք, որ լույսը ձեզ հետ առաջ է շարժվում: Ապա կրկին ձայն եք լսում, որն ասում է՝ ևս մեկ քայլ արեք:

Դուք ավելի համարձակ եք դառնում և կատարում եք հաջորդ քայլը, քանի որ արդեն գիտեք, որ լույսը շարժվում է: Եվ դուք չեք սխալվում: Ի՞նչ էր պահանջվում քայլ անելու համար: Հավատք և համարձակություն՝ քայլ կատարելու խավարի մեջ և նաև հնազանդվելու ձայնին: Պետք չէ, որ դուք ամեն ձայնի հետևեք, այլ հետևեք միայն Աստծո ձայնին, որը լույս է տալիս խավարում: Երբ հետևեք և հնազանդվեք, հավատքը կմեծանա և ձեր վստահությունը կաճի:

Քննարկման վերջում Քույր Բեդնարը և Քույր Լորենսը կիսվեցին Հիսուս Քրիստոսի Քավության մասին իրենց վկայությամբ: Աստծո Հոգու ներկայությունը շատ ուժեղ էր զգացվում ողջ հանդիպման ընթացքում: Ինչպես նշվում էր քննարկվող ելույթում. «Բոլորիս իրավիճակը տարբեր է և յուրաքանչյուրիս կյանքի մանրամասները եզակի են… Բայց նրանք, ովքեր մի կողմ են դնում դառնության շիշը և փոխարենը բարձրացնում են գոհության գավաթը, կարող են ճաշակել բժշկության, խաղաղության և հասկացողության հյութից»: ■

Նոր օգտակար կայք

Մենք ցանկանում ենք ներկայացնել մեր ընթերցողներին երիտասարդական միջոցառումներին վերաբերող նորաստեղծ վեբկայքը՝ www.lds.org/youth/activities:

Կայքը ներկայացնում է ավելի քան 160 միջոցառումների գաղափարներ 10 տարբեր անվանակարգերում, որպեսզի ղեկավարները և երիտասարդները կարողանան գտնել այդ բազմազանության մեջ միջոցառումներ, որոնք համապատասխանում են իրենց ծխի կամ ճյուղի երիտասարդների կարիքներին և հետաքրքրություններին: Կայքում անմիջապես ծրագրած միջոցառումների համար ավտոմատ ձևով հղում է ստեղծվում LDS.org-ում՝ ծխի և ցցի օրացույցներում:

Կայքը մատչելի է հետևյալ լեզուներով. չինարեն, անգլերեն, դանիերեն, ֆիններեն, ֆրանսերեն, գերմաներեն, հունգարերեն, ինդոնեզերեն, իտալերեն, ճապոներեն, կորերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, պորտուգալերեն, ռուսերեն, սամոերեն, իսպաներեն, շվեդերեն, թաերեն, թոնգերեն և ուկրաիներեն:

Երեց Փոլ Բ. Փայփերը՝ Յոթանասունից, գրում է կայքի նոր հնարավորությունների մասին. «Խնդիրներից մեկը, որ երիտասարդ ղեկավարները հաճախ ունենում են, դա երիտասարդների միջոցառումները ծրագրելն է այնպես, որպեսզի դրանք լինեն բազմազան և հավասարակշռված: Պատրաստվելու համար այն աշխատանքին, որը Երկնային Հայրն ունի իրենց համար, մեր երիտասարդները պետք է ունենան փորձառություններ, որոնք կօգնեն նրանց աճել հոգեպես, ֆիզիկապես, մտավոր և հասարակական առումներով: Վեբկայքի միջոցառումների անվանակարգերի բազմազանությունը, սկսած «Հոգևոր ուժից» և «Միսիոներական աշխատանքից» մինչև «Սպորտ, արշավներ և բացօդյա միջոցառումները» և «Արվեստ, երաժշտություն և պարը», ընդգծում են այն բազմաթիվ հնարավորությունները, որոնք մենք պետք է ընձեռենք մեր երիտասարդներին: ■

ՏԵՂԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարդասիրական օգնության ծրագրեր

Միսիոներներն օգնում են գյուղացիներին

Հանգիստ, բայց հետևողականորեն, «Վերջին Օրերի Սրբերի բարեգործություններ» կազմակերպությունը տարիներ շարունակ նյութեր և այլ օգնություն է ապահովում Հայաստանի գյուղական համայնքներին: Արդյունքում այդ համայնքներն ունեն ավելի մաքուր ջուր, որն ավելի հասանելի է իրենց տներին: Այսօր դժվար է պատկերացնել, թե ինչպիսին կլիներ կյանքը, եթե խմելու ջրի համար մեզ անհրաժեշտ լիներ ջրի կուժերով բեռնել մեր ավտոմեքենան և գնալ ու ջուր բերել 3 կմ հեռավորության վրա գտնվող մոտակա աղբյուրից, կամ եթե ջուրը հասանելի լիներ քսան րոպե առավոտյան և 20

ռոպե երեկոյան: Այս տարի ջրի ծրագրերի թիվը կհասնի 250-ի, որից օգտվել են ավելի քան 150 գյուղական համայնքներ: Եկեղեցու միսիոներների համար սովորական է դարձել գյուղացիների կողքին ջրագծերի առվափոսեր փորելով իրենց շաբաթական ծառայության ժամերը անցկացնելը: Առվափոսեր փորելը միսիոներներին հնարավորություն է ընձեռում Քրիստոսանման ծառայության օրինակ թողնել: ■

Միսիոներները ծառայելիս

Ծառայել մերձավորին՝ ծառայելով համայնքում

Բելա Հարությունյան՝ Վանաձոր ծուխ, Երևան Հայաստան ցից

Ծխի ծառայության ծրագիրը

Վանաձորը Հայաստանի Լոռու մարզի ամենամեծ քաղաքներից մեկն է: Այն շրջապատված է գեղեցիկ անտառներով և հարուստ է այգիներով: Եկեղեցու Վանաձոր ծխի անդամներով մենք որոշեցինք ամեն ամիս մաքրել մեր քաղաքի այգիներից մեկը: Հոգալով համայնքի կարիքները՝ մենք ծառայում ենք մարդկանց և նմանվում Հիսուս Քրիստոսին, որը մեզ համար ծառայության լավ օրինակ է թողել:

Եկեղեցու նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Մենք այստեղ՝ երկրի վրա, Տիրոջ ձեռքերն ենք՝ Իր զավակներին ծառայելու և բարձրացնելու պարտավորությամբ: Մեր շրջապատում կան կարիքի մեջ գտնվող մարդիկ, ովքեր մեր ուշադրության, մեր քաջալերման, մեր աջակցության, մեր սփոփման և մեր բարյացակամության կարիքն ունեն՝ լինեն ընտանիքի անդամներ, ընկերներ, ծանոթներ, թե՝ անծանոթներ» (Թոմաս Ս. Մոնսոն, «Ի՞նչ եմ ես արել ինչ-որ մեկի համար այսօր», *Լիահոնա*, նոյեմբեր 2009, 86, 87): Այսպիսով, այգին մաքրելը մարդկանց ծառայելու միջոց է:

Աշխատանքը այգում մեզ օգնում է ամրացնել մեր միաբանությունը, մեր սերը շրջապատի նկատմամբ: Մեր օրինակը գրավել է թաղամասում ապրող բնակիչների ուշադրությունը, որոնք սկսել են միանալ մեզ ամեն ամիս այգին մաքրելիս: Ամիսներ անց, մենք շնորհակալական խոսքեր ենք լսում մարդկանցից, ովքեր փոփոխություն են նկատում այգում: Հուսով ենք մեր օրինակը տարածել ողջ քաղաքով, որպեսզի բոլորը հոգան մեր քաղաքի մաքրության մասին, ինչը կբարձրացնի մարդկանց տրամադրությունը և կմեծացնի ուրախությունը: Քրիստոսին հետևելը մղում է բարի գործերի, և չկա ավելի լավ զգացում, քան մարդկանց պիտանի լինելը և նրանց երջանկություն պարգևելը: ■

Երիտասարդ ամուրիներին զորացնելու համաժողով

Երկրորդ տարին անընդմեջ Եկեղեցու քահանայության բաժանմունքը հատուկ համաժողովներ է կազմակերպում Արևելյան Եվրոպայի տարածքի Եկեղեցու երիտասարդների և երիտասարդ ամուրիների համար՝ նպատակ ունենալով օգնել տեղական ղեկավարներին Եկեղեցու աճող սերնդի երիտասարդների մասին հոգալու գործում:

Համաժողովի ծրագիրը շեշտում էր հոգևոր ինքնավստահություն ձեռք բերելու կարևորությունը, և ղեկավարներն օգնեցին երիտասարդ ամուրիներին բարելավել անձնական աղոթքները, սուրբ գրությունների ուսումնասիրությունը և հուշատետրեր վարել: Դասեր ուսուցանվեցին Աստվածության, վերականգնված ավետարանի, Մորմոնի Գրքի դերի մասին անձնական վկայություն ձեռք բերելու և ամրապնդելու վերաբերյալ, ինչպեսև այն մասին, թե ինչպես է միսիոներական ծառայությունն օգնում կիսվել ավետարանի ուրախությամբ և թե ինչպես կարող է նյութական ինքնապահովումն օգնել հոգևոր ինքնավստահությանը:

«Դասերը և ուսուցիչները շատ լավն էին», – ասաց Գոհար Եղիգարյանը: Երիտասարդ ամուրիները կատարեցին ժամանակի, շնորհների և դրամական միջոցների

ԵՋՀ համաժողով, ծառայության ծրագրի ավարտին

իրենց ներդրումը համաժողովի հաջողության գործում: «Երիտասարդ ամուրի խորհրդատուները շատ օգնեցին և լավ հոգացին մյուս ամուրիներ մասին, – ասաց Սիլվա Պողոսյանը: – Նրանք օգնում էին զորակցող զույգերին, մասնակցում էին, ուսուցանում էին և ոգեշնչում էին իրենց ընկերներին»:

Համաժողովի ժամանակ հնարավորություն եղավ ծառայության ծրագիր անցկացնել: Մասնակիցներն օգնեցին մաքրել հյուրանոցի տարածքը և բոլորը մասնակցություն ունեցան: «Մենք երախտապարտ ենք լավ ծառայության համար, որ մասնակիցները տրամադրեցին», – ասաց Արմինեն՝ հյուրանոցի ներկայացուցիչը:

Այս տարվա համաժողովին հրավիրված էին նաև ամուրիների ոչ անդամ ընկերները: Ղեկավարները շոյված էին նրանց վարքով ու մասնակցությամբ: Անդամներին հավասար նրանք վաղ առավոտյան արթնանում էին, մասնակցում էին առավոտյան ուսումնասիրություններին, հաճախում էին ինստիտուտի դասերին և լսում էին ղեկավարների հոգևոր ուղերձ-դասերը: Համաժողովից հետո նրանցից ոմանք ցանկություն հայտնեցին միանալ Եկեղեցուն, իսկ ոմանք միսիա ծառայելու նպատակ դրեցին: «Մենք հրաշալի երիտասարդներ ունենք և հույս ունենք, որ այս համաժողովը ուժ կտա նրանց լինելու ավելի երջանիկ և ամրապնդելու իրենց հավատքը», -հույս հայտնեց համաժողովի ղեկավարներից՝ Ռուզաննա Անսուլյանը:

Համաժողովի կարգախոսն էր. «Եկեք Քրիստոսի մոտ և կատարելագործվեք նրանում» (Մորոնի 10.32): «Մենք բոլորս ավելի շատ մոտեցանք Քրիստոսին … Ես տեսա մի քանի ամուրիների վկայություն բերելիս, ովքեր նախկինում երբեք վկայություն չէին բերել: Ես երջանիկ էի, տեսնելով մեր ջանքերի արդյունքը: Առաջին օրը լարված էր, սակայն ղեկավարներն արեցին իրենց լավագույնը, այնպես որ հաջորդող օրերն վեհացնող էին, միավորող և սիրով լի»:

Համաժողովի կարգախոսն էր. «Եկեք Քրիստոսի մոտ և կատարելագործվեք նրանում» (Մորոնի 10.32): «Մենք բոլորս ավելի շատ մոտեցանք Քրիստոսին … Ես տեսա մի քանի ամուրիների վկայություն բերելիս, ովքեր նախկինում երբեք վկայություն չէին բերել: Ես երջանիկ էի, տեսնելով մեր ջանքերի արդյունքը: Առաջին օրը լարված էր, սակայն ղեկավարներն արեցին իրենց լավագույնը, այնպես որ հաջորդող օրերն վեհացնող էին, միավորող և սիրով լի»:

Ինչպես երիտասարդ ամուրիները, այնպես էլ ղեկավարները հոգևորապես ավելի ինքնավստահ դարձան: Համաժողովի ընկերությունը և վկայությունները կօգնեն տեղական ղեկավարներին համաժողովից հետո ևս շարունակել ամրապնդել երիտասարդ ամուրիներին: ■

ՏԵՂԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ՁԱՅՆԵՐԸ

Աղոթքիս պատասխանները

Հասմիկ Աղաջանյան, Երևան ճյուղ, Երևան Հայաստան ցից

Հասմիկ Աղաջանյան

Ես աշխատում եմ որպես բուժքույր ատամնաբուժարանում: Իմ աշխատանքը սկսվում է վաղ առավոտյան և ավարտվում ուշ երեկոյան: Հանգստյանս օրը կիրակին է, որը մեծ սիրով նվիրում եմ Տիրոջը ծառայելուն: Մի կիրակի հայտարարվեց, որ մեզ այցելելու է Տիրոջ Առաքյալներից մեկը: Ես շատ ուրախացա, քանի որ գիտեմ, որ քահանայության բանալիները վերականգնվել են երկրի վրա և Տիրոջ ծառաները հայտնություն են ստանում մեզ համար: Սակայն հանդիպումը տեղի էր ունենալու չորեքշաբթի օրը ժամը 18.30, որին, հնարավոր է, չհասցնեի: Իմ աշխատանքի շաբաթվա գրաֆիկը հագեցված էր ամբողջությամբ և հնարավորություն չկար ինչ-որ բան փոփոխելու: Երկու օր շարունակ աղոթում էի Երկնային Հորը, խնդրելով նրան թույլ տալ լսելու Իր ուղարկած ծառաների ուղերձը:

Հանդիպման նախորդ օրը երեկոյան աղոթքի ժամանակ Սուրբ Հոգին իջավ ինձ վրա և ես խաղաղություն զգացի: Հաջորդ օրը մտադրվել էի խնդրել բժշկին, որ այդ օրը աշխատանքի չգնամ, որպեսզի մասնակցեի հանդիպմանը: Երբ պատրաստվում էի խոսել բժշկի հետ, հանկարծ զանգ ստացա հիվանդներից մեկից: Նա խնդրեց տեղափոխել իր հանդիպումը մեկ այլ օր: Նույնը պատահեց մյուս երկու հիվանդների հետ: Իմ ուրախությունը մեծ էր և ավելի մեծացավ, երբ բժիշկը խնդրեց զանգահարել այդ օրվա վերջին հիվանդին և խնդրել տեղափոխել իր այցը մեկ այլ օր: Ես դա արեցի մեծ հաճույքով, մտքում երախտագիտության խոսքեր ասելով Երկնային Հորը՝ աղոթքիս պատասխանելու համար:

Այդպիսով, ես մասնակցեցի հանդիպմանը: Ես շատ բան սովորեցի ու ամրապնդեցի իմ գիտելիքն ու վկայությունը Աստծո ծրագրի մասին: Առաջին բանը, որ սովորեցի, այն էր, որ Տերը պատասխանում է մեր աղոթքներին մեր կարիքներին համապատասխան: Իսկ երկրորդը՝ այն, որ խոնարհ և հավատարիմ լինելը բերում է օրհնություններ: Ես կրկին համոզվեցի, թե որքան ակնառու են Տիրոջ ծառաների ուղերձները մեր կյանքում: Նրանք կանչված են Տիրոջ կողմից և գիտեն մեր խնդիրների, հարցերի և փորձությունների մասին: Ես գիտեմ, որ մեր Երկնային Հայրը ապրում է և պատասխանում է մեր աղոքներին: Մենք կարող ենք նմանվել Նրան ու մի օր վերադառնալ Նրա մոտ Հիսուսը Քրիստոսի՝ Աստծո Միածին Որդու շնորհիվ: ■

Արժանի լինել այցելելու տաճար

Նելլի Մաթևոսյան, Գյումրի ծուխ, Երևան Հայաստան ցից

Սուրբ գրություններն ուսումնասիրելիս ես հաճախ էի հանդիպում պատմությունների տաճարի մասին: «Լիահոնա» ամսագրում ևս կան շատ պատմություններ տաճարի մասին: Տեսել էի նաև տաճարային նկարներ ու իմ մեջ մեծ ցանկություն էր առաջացել արժանի լինել տաճարային երաշխավորագրի: Ես սկսել էի հաճախակի կարդալ սուրբ գրությունները, ամեն կիրակի հաճախել հաղորդության ժողովներին, մասնակցել կիրակնօրյա դասերին և նպատակ էի դրել արժանի լինել ստանալու տաճարային երաշխավորագիր: Որքա՜ն երանելի զգացմունք է, երբ ընտանիքիդ բոլոր անդամներն արժանի են լինում դրան:

Այդպիսով, հավատարիմ մնալով, մի օր մենք արժանի եղանք այդ մեծ օրհնությանը, ստացանք տաճարային երաշխավորագիր: Շուտով եկավ բաղձալի ժամը ու մենք ընտանիքով գնացինք Ուկրաինայի Կիևի տաճար՝ կնքվելու մեր ընտանիքով հավերժության համար և կատարելու սուրբ արարողություններ մեր նախնիների համար: Լինելով տաճարում ես ոչ միայն զգացի, այլ նաև համոզվեցի, որ Եկեղեցու յուրաքանչյուր անդամի համար դա երկրի վրա եղած ամենասուրբ վայրն է:

Մասնակցելով տաճարային արարողություններին՝ ես ավելի շատ զգացի Հոգու ազդեցությունը և ավելի շատ մոտեցա Երկնային Հորը, Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Ես զգացի, որ տաճարն իրոք Տիրոջ տունն է երկրի վրա: Այն մի վայր է, որտեղ ավելի շատ ես ուսուցանվում և պատրաստվում Երկնային Հոր մոտ վերադառնալուն: Դա մի սրբավայր է, որտեղ մենք միավորվում ենք որպես հավերժական ընտանիքներ: Այնտեղ գտնվելով, ես հասկացա, որ ավելի հեշտ կկարողանամ տանել ամեն փորձություն, ամեն գայթակղություն և ուժ կունենամ համբերելու մինչև վերջ: Ես ըմբռնեցի լիովին, որ ամեն մի դժվարություն հաղթահարելի է, եթե հավատք ունես Քրիստոսի հանդեպ: ■

Մաթևոսյանների ընտանիքը

Ընտանեկան պատմությունը փոխում է մարդկանց կյանքը

Սվետլանա Մեհրաբինովա, Երևան ճյուղ, Երևան Հայաստան ցից

Ես ծառայում եմ որպես ընտանեկան պատմության խորհրդատու և ներկայումս ցցի ընտանեկան պատմության կենտրոնի տնօրեն եմ: Այս կամավոր ծառայությունն ինձ օգնում է ավելի երջանիկ լինել՝ երջանկացնելով այլ մարդկանց: Եկեղեցին ունի հրաշալի մի կայք՝ www.familysearch.org, որտեղ կարող ենք փնտրել մեր նախնիներին, կառուցել մեր տոհմածառը, գրել պատմություններ մեր և մեր նախնիների մասին և տեղադրել ընտանեկան լուսանկարներ և կիսվել հաճելի հիշողություններով: Կառուցելով մեր տոհմածառը՝ մենք մեծ ժառանգություն ենք ստեղծում մեր սերունդների համար:

Ընտանեկան պատմության կենտրոնի այցելուներից մեկը սկսել էր հետաքրքրվել իր նախնիներով և իմանալով կենտրոնի հնարավորությունների մասին, նա այցելեց մեզ և մենք օգնեցինք նրան հավաքել իր պատմությունը: Նա մեծ ոգեշնչում ստացավ և նպատակ դրեց այցելելու տաճար և փրկության արարողություններ կատարել իր նախնիների համար: Երբ տաճար գնալու հնարավորություն եղավ, նա իր հետ վերցրեց իր հավաքած տվյալները և արարողություններ կատարեց իր նախնիների համար: Նա շատ ուրախ էր, քանի որ ուներ հավատք Քրիստոսի Քավության և այդ աշխատանքի վերաբերյալ: Քանի որ այս եղբոր նախնիների մի մասը ուրիշ երկրից են, նա նպատակ է դրել գնալ իր նախնիների երկիր և շարունակել ընտանեկան պատմության աշխատանքը:

Մեր այցելուներից մեկն էլ մի քույր է, որը կորցրել էր իր հորը: Այդ կորուստը նրա համար շատ ծանր էր: Նա լսել էր, որ մեր Եկեղեցում կա հնարավորություն, որը թույլ է տալիս մահացածների համար արարողություններ կատարել: Նա սովորեց, որ մահացածներն արդարև կարող են փրկություն ստանալ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ՝ տաճարային արարողությունների միջոցով, որը մեզ հույս է տալիս, որ հավերժության մեջ կրկին կապրենք մեր ընտանիքներով: Նա նպատակ դրեց գնալ տաճար և կատարել այդ արարողությունները, և իրականացրեց իր նպատակը: Հիմա նա Հիսուս Քրիստոսի հավատարիմ հետևորդ է և ամեն շաբաթ հաճախում է ընտանեկան պատմության

Սվետլանա Մեհրաբինովան ընտանեկան պատմության կենտրոնում

կենտրոն և մեծացնում է իր տոհմածառը՝ նոր անուններ գտնելով և ավելացնելով դրանք իր տոհմածառին: Նա ցանկանում է որքան հնարավոր է շատ մարդկանց փրկել: Նա իրոք հասկացել է ընտանեկան պատմության կարևորությունը և թե ինչպես է այն փոխում մեր կյանքը:

Ես ինքս եղել եմ տաճարում և հնարավորություն եմ ունեցել արարողություններ կատարել իմ նախնիներից մի քանիսի համար: Մեծ ուրախություն եմ ապրել, զգալով, որ նրանք ընդունել են այդ արարողությունները, և որ ես բաժին ունեմ նրանց փրկության գործում, ինչի համար երջանիկ եմ: Իմ հավատքն ամրանում է, երբ կարդում եմ Աստվածաշնչում. «Ապա թե ոչ, ինչ կանեն մեռելների համար մկրտվողները, եթե արդարև մեռելները հարություն չառնեն, էլ ինչու են նրանց համար մկրտվում» (Ա Կորնթացիս ԺԵ.29): Մեր Երկնային Հայրը սիրում է իր բոլոր զավակներին և ցանկանում է տեսնել բոլորի փրկությունը: Միլիոնավոր մարդիկ մահացել են առանց Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը լսելու և առանց մկրտվելու հնարավորության: Ավետարանը քարոզվում է նաև հոգիների աշխարհում, իսկ մենք հնարավորություն ունենք նրանց համար արարողություններ կատարել, որոնք նրանք հնարավորություն չեն ունեցել երկրի վրա կատարել: Քրիստոսի Եկեղեցին միջոցներ է ստեղծել, որ մենք փնտրենք, ճանաչենք, սիրենք մեր նախնիներին ու ջանք գործադրենք նրանց փրկության համար, քանի որ մենք չենք կարող փրկություն ունենան առանց մեր նախնիների: ■

Ճշմարտության իմ որոնումները

Կարինե Առաքելյան, Չարենցավան ճյուղ, Երևան Հայաստան ցից

Ժամանակին փնտրում էի Աստծո ճշմարիտ խոսքը, բայց անգամ Աստվածաշունչ չունեի: Ինքնուրույն մտորում էի, փաստեր հավաքում, վերլուծություններ կատարում: Այդ ընթացքում տարբեր կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ոմանք ճանապարհին կանգնեցնելով, ոմանք տան դուռը թակելով, տարատեսակ պատմություններ էին պատմում ու գրականություն տրամադրում: Ես չեի վիրավորում, ոչ էլ արհամարհում էի որևէ մեկին, ուղղակի լսում էի նրանց: Ես որոշեցի ունենալ անձնական Աստվածաշունչս և սկսեցի գումար տնտեսել, որ գնեմ այն: Որոշ ժամանակ անց մտքովս մի բան անցավ, որ Աստծո խոսքը չպետք է գնվի կամ վաճառվի, ու երկար մտածելուց հետո, որոշեցի, որ ով որ ինձ նվիրի Աստվածաշունչ՝ նրան կհավատամ…

Կարինեն իր որդու հետ

Այդպես անցավ որոշ ժամանակ և մի օր ամուսինս տուն եկավ ձեռքին մի գիրք, մեկնեց ինձ և ասաց, որ դա Աստվածաշունչ է, և որ այն իրեն նվիրել են երկու օտարերկրացի տղաներ, որոնց երեցներ են կոչում, ասելով որ շատ հետաքրքիր գիրք է և անպայման պետք է կարդալ: Տարօրինակ Աստվածաշունչ էր դա՝ «Մորմոնի Գիրքը» վերնագրով, ու բոլորովին նման չէր իմ ուզած գրքին: Բայց ես որոշեցի կարդալ ինձ համար առաջին հայացքից սովորական գրականություն թվացող՝ «Մորմոնի Գիրքը»:

Այդ օրից ի վեր շատ բան փոխվեց իմ կյանքում: Նախ ես զգացի, որ իմ ներսում աստիճանական փոփոխություն է տեղի ունենում, որն ինձ ստիպում է ուրիշ կերպ հասկանալ ինձ շրջապատող աշխարհը: Այդ գրքում գրված խոսքերը համոզեցին ինձ բարիք գործել: Ես սկսեցի այլ կերպ կազմակերպել կյանքս: Եթե առաջ սիրում էի ընտանիքիս, այժմ այդ սերը կատարյալ էր: Ես գիտակցում էի, որ որպես մայր և կին մեծ պատասխանատվություն եմ կրում ընտանիքիս ճիշտ ուղղորդելու գործում, ու ես սկսեցի ամեն ինչում բարին տեսնել: Ես փոխվել էի ու այլևս հակված չէի գործելու չարիք, այլ շարունակ գործելու բարիք: Երկար ժամանակ է անցել այն օրից, երբ առաջին անգամ բացեցի «Մորմոնի Գիրքը»: Այժմ, երբ կարդում եմ Նեփիի խոսքերը, սիրտս լցվում է ուրախությամբ. «Ես

գիտեմ, որ Տեր Աստված կնիվիրագործի իմ աղոթքներն իմ ժողովրդի օգտի համար: Եվ խոսքերը, որ ես գրել եմ տկարության մեջ, ուժեղ կդարձվեն նրանց համար, քանզի այն նրանց համոզում է բարիք անել…. և այն խոսում է Հիսուսի մասին, և համոզում է նրանց հավատալ նրան և համբերել մինչև վերջ, որը կյանք է հավերժական» (2 Նեփի 33.4):

Այժմ ես և իմ ընտանիքը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ ենք: Ես սիրով կրկին ու կրկին կարդում եմ «Մորմոնի Գիրքը» և «անցյալի մարդկանց» խոսքերն ամեն օր ինձ ուղղորդում են ճիշտ քայլեր կատարել: Իսկապես, Մորմոնի Գրքի մարգարեները գիտեին մեր օրերի մասին, թե որքան կարևոր կլինեն իրենց գրած խոսքերը մեզ համար: Ես գիտեմ, որ յուրաքանչյուրիս վրա սուրբ գրությունները յուրովի են ազդում, սակայն արդյունքը նույնն է՝ Հիսուս Քրիստոսի վեհ Քավության շնորհիվ փրկված մարդը: ■

Եկեղեցին գտնելու ուրախությունը

Սերգեյ Ղուկասյան, Վանաձոր ծուխ, Երևան Հայաստան ցից

Ես լավ մանկություն և պատանեկություն եմ ունեցել, ստացել եմ կրթություն, ծառայել բանակում, շրջել տարբեր երկրներ, ընտանիք եմ ստեղծել, երեխաներ ունեցել, բայց այն ուրախությունը, ինչ ստացա, գտնելով Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին, չէի ճաշակել երբեք: Կինս ժամանակից շուտ մահացավ և նրա մահից հետո շատ փորձությունների մեջ ընկա և հասել էի կործանման եզրին:

2012թ. մայիսին ինձ բախտ վիճակվեց հանդիպել 2 հրեշտակների, որոնք ներկայացնում էին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին: Այդ օրվանից կյանքս լույս տեսավ, ինչպես խավարն է լուսավորվում: Նրանց շնորհիվ ես գտա այն, ինչ փնտրում էի երկար ժամանակ, իմ սիրտը լցվեց ուրախությամբ, խաղաղությամբ և երջանկությամբ: Ես ձեռք բերեցի հավատք առ Փրկիչ Հիսուս Քրիստոսը, ազատվեցի կախվածություն առաջացնող վատ սովորություններից, գիտելիք ստացա Քրիստոսի Քավության և Հարության մասին, ավետարանի լրիվության և փրկության ծրագրի մասին:

2012-ի հունիսին մկրտվեցի և ինձ ընդունված զգացի Եկեղեցու հրաշալի ընտանիքում, որտեղ կա ամեն ինչ ուրախ ապրելու համար: Մոտ 10 տարի էր անցել, ինչ կորցրել էի կնոջս՝ հիվանդության պատճառով, և երբեք չէի մտածել կրկին ամուսնանալու մասին, բայց 2013թ. ամռանը, երբ մեկնեցի Տիրոջ տաճար և կատարեցի սրբազան արարողություններ հարազատներիս, ծնողներիս, կնոջս համար, ես ավելի լավ հասկացա ընտանիքի կարևորությունը Երկնային Հոր ծրագրում, և որ «լավ չէ մարդու համար մենակ մնալ» (տես Ծննդոց 2.18): Ինձ մոտ ցանկություն առաջացավ կրկին ընտանիք կազմելու և Աստծո բարի կամքով Եկեղեցում գտա մի հրաշալի միայնակ քրոջ: Մենք ամուսնացանք և մեր երջանկությունն ավելացավ: Հիմա ես միայնակ չեմ ու գիտեմ, որ կապրեմ հավիտենական կյանք Տիրոջ սուրբ հովանու ներքո:

Ես շատ շնորհակալ եմ Երկնային Հորը Իր Միածին Որդու զոհաբերության համար, Հիսուս Քրիստոսի Քավության և Հարության համար, շնորհակալ եմ Աստծո Երջանկության Ծրագրի, Նրա անսահման սիրո և Նրա պարգևած սուրբ գրությունների համար: Ես գիտեմ, որ այն ինչ սովորում եմ այս Եկեղեցում, ճշմարիտ է, և «… սա է ճանապարհը. և չկա ոչ մի այլ ճանապարհ, ոչ էլ անուն՝ երկնքի տակ տրված, որով մարդ կարողանա փրկվել Աստծո արքայությունում» (2 Նեփի 31.21):

Հիսուս Քրիստոսը կանչում է բոլոր մարդկանց աշխարհի տարբեր մասերից, և ով որ լսի Նրա ձայնը և հնազանդվի, ուրախություն կունենա այս կյանքում և ապահովություն հավերժության մեջ: Նեփին ասում է. «Զարթնի՛ր, իմ հոգի: Այլևս մի՛ վհատվիր մեղքի պատճառով: Ուրախացի՛ր, ո՛վ իմ սիրտ, և այլևս տեղ մի՛ տուր իմ հոգու թշնամուն» (2 Նեփի 4.28): Այս հատվածը նմանեցնում եմ ինձ և շատ եմ ցավում, որ այսքան ուշ եմ միայն գտել իմ հոգու ազատությունը: ■

Սերգեյն ու նրա կինը՝ Անահիտը

ARMENIAN